

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ԲԻԶՆԵՍ ՎԱՐԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Վահե Արամյան

ԵՀ, Կառավարման ամբիոն, ասպիրանտ
v.aramyan@mail.ru, +374 96 199100

Ձեռնարկատիրական և բիզնես վարկերի արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ է վերլուծել այն միտումները, որոնք գրանցվում են այս ոլորտում: Մի կողմից՝ առևտրային բանկերի և մյուս կողմից՝ վարկային կազմակերպությունների համար, ոչ թե թիրախային են հանդիսանում բիզնես նախագծերը կամ ձեռնարկատիրական վարկերը, այլ ընդհակառակը՝ սպառողական վարկերը: Իսկ փնտեսական զարգացման հիմնական տրամաբանությունը կառուցվում է ոչ թե սպառողական այլ բիզնես վարկերի վրա, որն էլ փնտեսության իրական և ֆինանսական հատվածների ինտեգրումից է բխում:

Հիմնաբառեր. վարկային շուկա, բիզնես վարկեր, արտարժույթային վարկեր, դրամային վարկեր, ոլորտներ, կառուցվածք:

ՀՀ տնտեսության զարգացման գործում լուրջ դերակատարում ունի վարկային շուկայի արդյունավետ կառավարումը: Ակտիվություն է նկատվում տնտեսության առանձին ոլորտներում, որն իր հերթին բերում է վարկավորման ծավալների աճի:

Վարկային շուկայում իր ուրույն տեղը և նշանակությունն ունի բիզնես վարկերի կառավարումը, որի վերլուծության հիման վրա կարելի է նաև պատկերացում կազմել ձեռնարկատիրական գործունեությանը զբաղվողների կամ ձեռնարկատիրության ոլորտում տեղի ունեցող տեղաշարժերի կամ միտումների վերաբերյալ:

ՀՀ վարկային շուկայում բիզնես վարկերի միտումների վերլուծությունը ներկայիս տնտեսական զարգացումների պարագայում բավականին արդիական է, այդ իսկ պատճառով փորձենք ձևակերպել այս ոլորտի մի քանի հիմնական խնդիրներ՝

- Ի՞նչ տեսակարար կշիռ ունեն բիզնես վարկերը ՀՀ առևտրային բանկերի կողմից տրվող վարկերի ընդհանուր պորտֆելում, և

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ինչպիսի միտումներ են նկատվել վերջիններիս հետ կապված վերջին 7 տարիների ընթացքում:

- Ինչպիսի հաջողություններ են արձանագրել վարկային կազմակերպությունները ձեռնարկություններին տրամադրվող բիզնես վարկերի բնագավառում:
- Ինչպիսի արժույթով են հիմնականում վարկավորվում ՀՀ ձեռնարկությունները, և արդյո՞ք առկա է որոշակի արտարժույթային ռիսկ բիզնես վարկավորման բնագավառում:
- Արդյո՞ք պետական ձեռնարկությունները ևս ունեն ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար վերցրած բիզնես վարկեր, և ինչպիսի արժույթային կառուցվածք ունեն այդ վարկերը:
- Ինչպիսին է բիզնես վարկերի ճյուղային բաշխվածությունը, և արդյոք կան տնտեսության մեջ վարկավորման ճյուղային կառուցվածքային լուրջ տեղաշարժեր:

Աղյուսակ 1.

Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության որոշ հատվածների (ժամանակահատվածի վերջ, մլրդ. ՀՀ դրամ) [1]

Վարկեր	2013	2014	2015	2016	2017	2018	2019/08
Ռեզիդենտներին	1,743,7	2,091,3	2,005,2	2,116,8	2,479,5	2,890,3	3,168,3
<i>Դրամով</i>	667,1	714,8	680,9	746,3	961,4	1,331,5	1,560,3
<i>Արտարժույթով</i>	1,076,5	1,376,5	1,324,3	1,370,5	1,518,1	1,558,8	1,607,9
Այդ. թվում՝							
Ձեռնարկություններին	991,0	1,181,0	1,126,0	1,211,1	1,409,5	1,534,9	1,558,4
<i>Դրամով</i>	182,3	175,4	179,4	197,7	264,0	347,1	352,0
Մասնավոր	176,8	173,4	176,3	196,1	261,8	343,3	349,0
Պետական	5,5	2,0	3,0	1,5	2,1	3,8	2,9
<i>Արտարժույթով</i>	808,7	1,005,6	946,6	1,013,4	1,145,5	1,187,7	1,206,4
Մասնավոր	789,9	986,5	923,4	992,6	1,129,2	1,175,0	1,194,2
Պետական	18,7	19,0	23,1	20,7	16,3	12,6	12,1
Ոչ ռեզիդենտներին	54,5	96,9	114,2	319,2	204,9	238,1	246,4
<i>Դրամով</i>	13,3	15,8	46,6	154,2	66,8	45,5	56,5

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ


<i>Արդարժույթով</i>	41,1	81,0	67,6	164,9	138,1	192,6	189,9
Ընդամենը վարկեր	1,798,2	2,188,3	2,119,5	2,436,0	2,684,5	3,128,5	3,414,7
ՀՆԱ (շուկայական գներով), մլրդ դրամ	4,555,6	4,828,6	5,043,6	5,067,2	5,564,4	6,005,0	-
Արտարժույթային վարկերի տեսակարար կշիռը (%)	62.2	66.6	65.7	63.0	61.7	56.0	52.7
Դրամով վարկերի տեսակարար կշիռը (%)	37.8	33.4	34.3	37.0	38.3	44.0	47.3
Ձեռնարկություններին տրված վարկերի տեսակարար կշիռը (%)	55.1	54.0	53.1	49.7	52.5	49.1	45.6
Ձեռնարկություններին տրված արտարժույթային վարկերի տեսակարար կշիռը (%)	81.6	85.1	84.1	83.7	81.3	77.4	77.4
Ձեռնարկություններին տրված դրամով վարկերի տեսակարար կշիռը (%)	18.4	14.9	15.9	16.3	18.7	22.6	22.6

ՀՀ առևտրային բանկերի կողմից տրվող վարկավորման ծավալը ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին 2019թ.-ի սեպտեմբերի սկզբի դրությամբ ընդհուպ մոտեցել են 3 տրիլիոն 414.7 մլրդ դրամի, որից ռեզիդենտների մասնաբաժինը կազմում է գրեթե 3 տրիլիոն 168,3 մլրդ դրամ, իսկ ոչ ռեզիդենտների մասնաբաժինը՝ 246,4 մլրդ դրամ: Փաստորեն, ոչ ռեզիդենտների վարկերը կազմում են ՀՀ առևտրային բանկերի կողմից տրված վարկերի ընդամենը 7.2%-ը:

Մյուս կողմից ՀՀ առևտրային բանկերի կողմից տրված վարկային ընդհանուր պորտֆելում արտարժույթային վարկերը կազմում են 1 տրիլիոն 796 մլրդ դրամի կարգի գումար, իսկ դրամով տրված վարկերը՝ 1 տրիլիոն 616 մլրդ դրամ, այսինքն՝ առևտրային բանկերի կողմից տրված վարկերը կազմում են գրեթե 52%, իսկ դրամով տրված վարկերը՝ համապատասխանաբար՝ 48%: Փաստորեն 2013 թ.-ից սկսած գրեթե 10%-ով կրճատվել են ՀՀ առևտրային բանկերի կողմից տրվող արտարժույթային վարկերը, իսկ դա նշանակում է, որ բավականին ամրապնդվել են ՀՀ դրամի դիրքերը:

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Excel ծրագրի միջոցով հաշվարկելով ՀՀ-ում 2013-2018թթ. ընթացքում տրված վարկերի և շուկայական գներով արտահայտված ՀՆԱ-ի միջև կապը՝ կոռելյացիայի գործակիցը ստացվում է **0.972**, որը գրեթե մոտ է մեկի, այսինքն՝ ստացվում է, որ ՀՆԱ-ի և տրված վարկերի միջև առկա է անմիջական կապ: Ինչ վերաբերում է ձեռնարկություններին տրված վարկերի և ՀՆԱ-ի միջև կապին կամ կոռելյացիայի գործակցին, ապա այն **0.973** է և շատ չնչին տարբերություն ունի ընդհանուր վարկերի կոռելյացիայի գործակցից և գրեթե հավասար է վերջինիս: Դա ակնհայտ նկատելի է նաև ստորև ներկայացված գծապատկերում:



Գծապատկեր 1. ՀՆԱ-ի, ընդհանուր և ձեռնարկությունների վարկերի միպրումները 2013-2018թթ. (մլրդ դրամ)

Ստացվում է, որ ՀՀ առևտրային բանկերի կողմից տրված վարկերն իրենց անմիջական ազդեցությունն են թողնում ՀՆԱ-ի աճի վրա, հետևաբար, կանխատեսելի է, որ 2019թ.-ի 8 ամիսների հաշվարկով գրանցված գրեթե 300 մլրդ դրամի հասնող վարկավորման աճը նպաստելու է ՀՆԱ-ի գրեթե համահունչ աճին:

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Աղյուսակ 2.

Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության որոշ հատվածների (Ժամանակահատվածի վերջ, մլրդ. ՀՀ դրամ) [1]

	2014	2015	2016	2017	2018	2019/08
Ռեզիդենտներին	167,2	162,2	166,2	187,6	224,1	281,5
<i>Դրամով</i>	106,3	108,6	112,1	132,1	162,0	187,0
<i>Արտարժույթով</i>	60,8	53,6	54,0	55,5	62,0	94,5
Ձեռնարկություններին	35,5	28,0	26,0	27,8	33,3	68,3
<i>Դրամով</i>	13,5	15,1	14,0	14,9	14,3	15,0
Մասնավոր	12,8	14,9	13,9	14,8	14,3	14,9
Պետական	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
<i>Արտարժույթով</i>	22,0	12,8	11,9	12,8	18,9	53,3
Մասնավոր	22,0	12,8	11,9	12,8	18,9	53,3
Պետական	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
Ոչռեզիդենտներին	0.0	18,4	40,9	75,2	82,1	104,2
<i>Դրամով</i>	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
<i>Արտարժույթով</i>	30	18,2	40,9	75,1	82,1	104,2
Ընդամենը վարկեր	167,3	180,6	207,1	262,8	306,2	385,8

Մյուս կողմից պետք է նշել, որ վարկային կազմակերպությունները ևս գրեթե 10-11% մասնաբաժնով մրցակցելով՝ առևտրային բանկերի հետ համատեղ վարկավորում են իրականացրել, իսկ 2019թ.-ի օգոստոսի վերջի դրությամբ ունեցել են գրեթե 385,8 մլրդ դրամի հասնող պորտֆել: Այստեղ ոչ ռեզիդենտների մասնաբաժինը կազմում է գրեթե 104 մլրդ դրամ, իսկ ռեզիդենտներինը՝ 281 մլրդ դրամ:

ՀՀ վարկային կազմակերպությունների և առևտրային բանկերի կողմից տրված վարկային միջոցները գումարելով կարելի է ստանալ ընդհանրական ցուցանիշ և դրանով իսկ փորձել պատկերացում կազմել ՀՀ ընդհանուր վարկային շուկայի չափերի վերաբերյալ, սակայն պետք է արձանագրել մեկ փաստ, որ ՀՀ առևտրային բանկերը շատ դեպքերում ֆինանսավորում են ՀՀ վարկային կազմակերպություններին՝ վարկեր տալու միջոցով, իսկ դա նշանակում է, որ այդ պարագա-

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

յում չենք կարողանա խուսափել կրկնահաշվարկից և թվային տվյալները կունենան մոտավոր ճշգրտություն:

Ինչ վերաբերում է ձեռնարկություններին տրված վարկերին, ապա դրանք 2013թ.-ին կազմել են 991 մլրդ դրամ, որն ընդհանուր վարկային պորտֆելում ունեցել է 55.1% մասնաբաժին, իսկ արդեն 2019թ.-ի 8-րդ ամսվա վերջի դրությամբ այն հասել է 45.6%-ի կամ 1 տրիլիոն 558 մլրդ դրամի, սա նշանակում է, որ վերջին 7 տարվա ընթացքում չի պահպանվել բիզնեսի վարկավորման աճի համամասնությունը և այլ ոլորտներին տրվող վարկերի ծավալները գերազանցել են բիզնեսի վարկավորման ծավալներին:

Հնարավոր է արդյո՞ք դա իր մեջ պարունակում է տնտեսության զարգացման որոշակի ռիսկեր, բնականաբար այո, քանի որ եթե բիզնեսի վարկավորման ծավալները նվազում են, ապա նվազում է նաև տնտեսական աճ ապահովող հիմնական «առողջ» մեխանիզմը, իհարկե տնտեսական աճ կարելի է ապահովել նաև ներմուծման և սպառողական վարկերի շնորհիվ, սակայն դա առողջ տնտեսության մասին դժվար թե փաստի:

ՀՀ վարկային կազմակերպությունների կողմից ձեռնարկություններին տրված վարկերը 2013թ.-ին կազմել են գրեթե 35.5 մլրդ դրամ, իսկ 2019թ.-ի օգոստոսին հասել են 68.3 մլրդ դրամի կամ գրեթե 17%: Սա նշանակում է, որ ՀՀ վարկային կազմակերպություններին ձեռնարկությունների վարկավորման շուկան այնքան էլ չի հետաքրքրում: Իհարկե, հաշվի առնելով նաև այս ոլորտում վարկային կազմակերպությունների կողմից տարվող ագրեսիվ տոկոսադրույքային քաղաքականությունը ձեռնարկությունների համար այնքան էլ նպաստավոր չի լինի համագործակցել վարկային կազմակերպությունների հետ, քանի որ նախընտրությունը տրվում է առևտրային բանկերին և միայն որոշակի առումով առևտրային բանկերի կողմից մերժված ձեռնարկություններն են ստիպված համագործակցում վարկային կազմակերպությունների հետ՝ հայտնվելով ավելի բարձր տոկոսադրույքներով բիզնեսի ֆինանսավորման ռիսկի առաջ:

ՀՀ առևտրային բանկերի կողմից ձեռնարկություններին տրվող վարկերի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ են կազմում արտարժույթային վարկերը, օրինակ 2014թ.-ին դրանք հասել են ձեռնարկություններին տրված վարկերի գրեթե 85%-ին, այսինքն՝ դրամով տրված վար-

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

կերը կազմել են գրեթե 15%, 2019 թ.-ի օգոստոսին այդ ցուցանիշը կազմել է 77.4%, սակայն դա ևս բարձր է: Այսինքն՝ եթե ՀՀ տնտեսության մեջ ընդհանուր վարկային պորտֆելում արտարժույթային վարկերի և դրամով վարկերի տեսակարար կշիռները գրեթե մոտեցել են իրար, ապա նույնն ասել ձեռնարկատիրական վարկերի վերաբերյալ մենք չենք կարող, քանի որ դրանց արտարժույթային կառուցվածքը շատ դանդաղ է փոփոխվում, իսկ դա նշանակում է, որ վարկ ունեցող ձեռնարկությունների $\frac{3}{4}$ -ը ունի արտարժույթից լուրջ կախվածություն, ինչպես նաև սա փաստում է սեփական դրամի նկատմամբ քիչ վստահության, ինչպես նաև դրամով վարկավորումից խուսափելու մասին: Չի բացառվում, որ այստեղ նաև իր ուրույն տեղն ունի ներմուծման համար վերցվող վարկերի ծավալը, ինչպես նաև ավելի ցածր վարկավորման տոկոսադրույքներն արտարժույթով վարկերի առումով, սակայն դա ևս լուրջ հետազոտության առարկա է ինքնին հանդիսանում:

Իհարկե, ձեռնարկությունների վարկավորման վերլուծությունն անհրաժեշտ է իրականացնել ոչ միայն ըստ արժույթների, այլ նաև պետական և մասնավոր ձեռնարկությունների վարկավորման տեսանկյունից: Սակայն փաստն այն է, որ պետական ձեռնարկությունների վարկավորման ծավալները այնքան էլ մեծ չեն և տատանվել են տարբեր տարիների 15-26 մլրդ դրամի շրջանակներում և պետությունն այստեղ լուրջ դերակատարում չի ունեցել:

ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ՀՀ դրամով վարկերն ըստ ոլորտների վերլուծելիս նկատում ենք, որ դրամով տրվող վարկային պորտֆելի գրեթե կեսը կազմում են սպառողական վարկերը, որոնք կազմում են գրեթե 701 մլրդ դրամ: Իհարկե, սպառողական վարկը ևս բիզնեսի համար առաջացնում է լրացուցիչ վճարունակ պահանջարկ, սակայն շատ հավանական է, որ այդ վարկերն ուղղվում են ոչ թե տեղական արտադրանքի կամ հայրենական բիզնեսի կողմից ստեղծված ապրանքների և ծառայությունների ձեռքբերմանը, այլ ներմուծված տեխնիկայի, սմարթֆոնների և այլն:

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Աղյուսակ 3.

**ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ՀՀ դրամով վարկերն ըստ ոլորտների [1]
(Ժամանակահատվածի վերջ, մլրդ. ՀՀ դրամ)**

Ոլորտ	2014	2015	2016	2017	2018	2019/07
Արդյունաբերություն	69,1	63,5	61,1	80,5	103,8	109,2
Գյուղատնտեսություն	47,3	39,4	45,7	53,6	74,1	89,9
Շինարարություն	25,4	26,0	13,7	26,1	38,4	44,2
Տրանսպորտ և կապ	9,4	19,4	20,5	13,3	22,7	13,1
Առևտուր	77,3	66,8	54,2	66,4	95,7	100,0
Սպասարկման ոլորտ	14,9	16,8	31,0	46,5	58,4	60,7
Սպառողական վարկեր	353,3	322,1	334,9	407,8	593,0	701,6
Հիփոթեքային վարկեր	72,1	80,8	89,0	111,1	149,9	192,0
Այլ	18,6	15,8	53,4	90,8	121,6	119,5
Ընդամենը	687,8	650,8	703,9	896,5	1,257,9	1,430,7

Աղյուսակային տվյալներից ակնհայտ է դառնում, որ արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության, տրանսպորտի և կապի, առևտրի, ինչպես նաև սպասարկման ոլորտներին տրված վարկերը կարելի է համարել բիզնես վարկեր: Բիզնես վարկերի ոլորտային վարկերի ծավալն ընդհանուր դրամով տրված վարկերի մեջ կազմել է մոտ 30-35%, իսկ վերջին տարիներին ավելի շատ մոտ է եղել 30%-ին, իսկ դրամային արտահայտությամբ 2019թ.-ի հուլիսին կազմել է 417 մլրդ դրամ:

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Աղյուսակ 4.

**ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված արտարժույթով վարկերն ըստ ոլորտների [1]
(Ժամանակահատվածի վերջ, մլրդ. ՀՀ դրամ)**

Ոլորտ	2014	2015	2016	2017	2018	2019/07
Արդյունաբերություն	359,9	311,5	358,8	345,6	413,5	367,6
Գյուղատնտեսություն	80,2	98,2	90,6	77,8	62,0	54,8
Շինարարություն	98,7	80,5	89,0	117,6	122,7	130,5
Տրանսպորտ և կապ	34,8	51,1	53,6	55,2	80,1	82,8
Առևտուր	308,9	278,6	281,5	353,1	345,3	358,2
Սպասարկման ոլորտ	118,7	139,2	158,3	170,8	177,8	194,4
Սպառողական վարկեր	98,1	100,9	99,2	103,5	108,1	109,3
Հիփոթեքային վարկեր	100,3	98,0	94,6	97,8	105,2	112,5
Այլ	122,3	123,6	114,2	155,2	109,5	109,3
Ընդամենը	1,322,3	1,282,1	1,340,2	1,477,1	1,524,6	1,519,9

Ի տարբերություն դրամով տրված վարկերի՝ վերոնշյալ ոլորտների արտարժույթային վարկերի տեսակարար կշիռը կազմել է գրեթե 75-78%, իսկ 2018թ.-ի վերջին ընդհուպ մոտեցել է 1.2 տրիլիոն դրամի:

Ոլորտային վարկերի ընդհանրական ցուցանիշի վերլուծությունից պարզ է դառնում, որ սպառողական վարկերը գրեթե միշտ գտնվել են առաջին հորիզոնականում, իսկ 2019թ.-ին գերազանցել են 811 մլրդ դրամի մակարդակը:

Բիզնես վարկերից ամենամեծ ծավալը և մասնաբաժինն է ունեցել արդյունաբերությունը՝ մոտ 477 մլրդ դրամ, որին հաջորդել է առևտուրը՝ 458 մլրդ դրամ ծավալով: Սպասարկման ոլորտին բանկերի կողմից ուղղվել է գրեթե 255 մլրդ դրամ, որի աճի տեմպերը 2014թ.-ի համեմատությամբ գրեթե կրկնապատկվել են: Սպասարկման ոլորտը նյութական արդյունք չի ստեղծվում, սակայն տնտեսության այլ ճյուղերի զարգացմանը համար այս ոլորտը ևս կարևոր դերակատարում ունի:

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հատկանշական է այն հանգամանքը, որ ՀՀ տնտեսության մեջ ամենամեծ տեսակարար կշիռ ունեցող ճյուղերից մեկի՝ գյուղատնտեսության վարկավորման ծավալներն այնքան էլ մեծ չեն, հատկապես, այն պարագայում, երբ առկա են սուբսիդավորման բավականին լայն պայմաններ, սա արդեն իսկ ահազանգ է հասկանալու համար, որ գյուղատնտեսության զարգացման վարկավորման գործիքից բացի անհրաժեշտ է կյանքի կոչել գյուղատնտեսության զարգացման այլ մեխանիզմներ ևս:

Աղյուսակ 5.

ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերն ըստ ոլորտների [1] (ժամանակահատվածի վերջ, մլն. ՀՀ դրամ)

Ոլորտ	2014	2015	2016	2017	2018	2019/07
Արդյունաբերություն	429,0	375,1	419,9	426,1	517,4	476,9
Գյուղատնտեսություն	127,5	137,6	136,3	131,4	136,2	144,7
Շինարարություն	124,1	106,5	102,8	143,7	161,1	174,8
Տրանսպորտ և կապ	44,2	70,5	74,2	68,6	102,9	96,0
Առևտուր	386,2	345,4	335,8	419,6	441,0	458,3
Սպասարկման ոլորտ	133,7	156,1	189,4	217,4	236,2	255,1
Սպառողական վարկեր	451,5	423,0	434,2	511,3	701,1	811,0
Հիփոթեքային վարկեր	172,4	178,9	183,6	209,0	255,2	304,5
Այլ	141,0	139,4	167,6	246,0	231,1	228,9
Ընդամենը	2,010,2	1,933,0	2,044,2	2,373,6	2,782,6	2,950,6

Հանրագումարային առումով ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերի մեջ բիզնես վարկերի ծավալը 2019թ.-ի հուլիսին հասել է 1 տրիլիոն 606 մլրդ դրամի, որը տարեց տարի դրսևորում է աճի միտում: Իհարկե, բիզնես վարկերի կառավարման վերաբերյալ դրանից կարելի է նաև լուրջ հետևություն-

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ներ անել, քանի որ եթե այս բնագավառում գրանցվեին թերացումներ, ապա նման կտրուկ աճ չէր արձանագրվի:

Հոդվածում կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում հանգել ենք մի շարք եզրակացությունների և հետևությունների՝

- ՀՀ վարկային շուկայում բիզնես վարկերի աճի միտումներն ակնհայտ են, քանի որ դրանք վերջին 7 տարիների ընթացքում կայուն կերպով աճել են: Սակայն, նույնը չի կարելի ասել բիզնես կամ ձեռնարկատիրական վարկերի տեսակարար կշռի վերաբերյալ, քանի որ այն կրճատվել է գրեթե 10%-ով՝ հասնելով մոտ 45%-ի:

- ՀՀ վարկային կազմակերպությունները ձեռնարկությունների վարկավորման բնագավառում ունեն փոքր մասնաբաժին, քանի որ վերջիններս նախընտրում են վարկավորել անհատ քաղաքացիների: Բիզնեսի համար էլ վարկային կազմակերպությունների կողմից առաջարկվող պրոդուկտները քիչ մրցունակ են՝ համեմատած առևտրային բանկերի կողմից առաջարկվող պրոդուկտների:

- Բիզնեսի վարկավորումը ՀՀ-ում հիմնականում՝ գրեթե $\frac{3}{4}$ -ով հիմնվում է արտարժութային վարկերի վրա, որը նշանակում է, որ վերջիններս կամ ունեն ներմուծման ուղղվածություն, կամ պարզապես շահեկան են համարում արտարժութային վարկերի տոկոսադրույքները, քանի որ արտարժութային ռիսկի տակ մտնել նման պարագայում այնքան էլ ճիշտ չէր լինի:

- Պետական ձեռնարկությունների կողմից վերցված բիզնես վարկերը վերջին 7 տարում չեն գերազանցել մոտ 26 մլրդ դրամը, որը փաստում է ոլորտի դեռևս կայացման թույլ ցուցանիշների մասին:

- Ինչ վերաբերում է բիզնես վարկավորման մեջ ճյուղային կամ կառուցվածքային լուրջ տեղաշարժերին, ապա այստեղ կրկին պատկերը գրեթե չի փոխվում և չնչին տատանումներով՝ արդյունաբերությունը միշտ առաջինն է, որին հաջորդում է առևտուրը, իսկ երրորդ տեղում է սպասարկման ոլորտը:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ ԿԲ պաշտոնական կայք

<https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>, վերջին մուտք 10.13.2019թ.:

УПРАВЛЕНИЕ БИЗНЕС-КРЕДИТАМИ И АНАЛИЗ ИХ СТРУКТУРНЫХ СДВИГОВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Vahe Aramyan

EU, кафедра Менеджмента, аспирант

Чтобы эффективно управлять бизнес-кредитами, необходимо проанализировать тенденции в этой области. Для коммерческих банков и кредитных организаций бизнес-проекты или предпринимательские кредиты являются не целевыми, а, наоборот, потребительскими. Основная направленность экономического развития строится не на потребительских кредитах, а на бизнес-кредитах, в основе которых лежит интеграция реального и финансового секторов экономики...

***Ключевые слова:** кредитный рынок, бизнес-кредиты, валютные кредиты, драмовые кредиты, секторы, структура*

BUSINESS LOAN MANAGEMENT AND STRUCTURAL SHIFT ANALYSIS IN THE REPUBLIC OF ARMENIA

Vahe Aramyan

EU, Chair of Management, Postgraduate Student

In order to effectively manage business loans, it is necessary to analyze the trends in this area. Consumer loans and not the business projects or business loans are targeted by commercial banks on the one hand and credit organizations on the other. And the main thrust of economic development is built not on the consumer but business loans, based on the integration of the real and financial sectors of the economy.

Keywords: credit market, business loans, foreign currency loans, AMD loans (credits), sectors, structure.

Ընդունվել է արժագրության՝ 09.03.2020թ.

Գրախոսվել է՝ 13.04.2020թ.